



## ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲԻ

### ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ 2019

**2019թ. ՀՈՒԼԻՍԻ 18-ին** մայրաքաղաքի Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում տեղի ունեցավ ԵՄԱ ամենամյա մրցանակի հանձնման արարողությունը, որը նվիրված էր Երևանի մամուլի ակումբի հիմնադրման 24-րդ տարեդարձին:

**ԵՄԱ ամենամյա մրցանակը** սահմանվել է 1998-ից և տրվում է Հայաստանի լավագույն լրագրողներին, ՋԼՄ-ներին և մեդիա-կազմակերպություններին:

2019թ. ԵՄԱ ամենամյա մրցանակաբաշխության արարողության ժամանակ հանձնվեցին նաև ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ և Համայնքների ֆինանսիստների միավորման հետ համագործակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀաՄաՏեղ) ծրագրի հատուկ մրցանակները:

## ԵՄԱ ամենամյա մրցանակի 2018-2019թթ. դափնեկիրները

### ԵՄԱ մրցանակ



**Հակոբ ԲԱԴԱԼՅԱՆ**, Lragir.am կայքի քաղաքական մեկնաբան՝ քաղաքական-վերլուծական հրապարակումների համար: Մրցանակը հանձնեց ԵՄԱ փոխնախագահ Ավետ Դեմուրյանը:

### ԵՄԱ մրցանակ



**Նելլի ՌԱՖԱՅԵԼՅԱՆ**, «Շողակաթ» հեռուստաընկերության խմբագիր՝ «Տարբերակ» հաղորդաշարում հանրային կարևորության թեմաները խորը և բազմակողմանի ներկայացնելու համար: Մրցանակը հանձնեց ԵՄԱ նախագահ Բորիս Նավասարդյանը:

## Երևանի մամուլի ակումբի և Համայնքների ֆինանսիստների միավորման հատուկ մրցանակ



**«ՑԱՅԳ» հեռուստաընկերություն**՝ համայնքային խնդիրների հետևողական և պրոֆեսիոնալ լուսաբանման համար: Մրցանակը հանձնեց Համայնքների ֆինանսիստների միավորման փոխնախագահ, ՀաՄաՏեղ ծրագրի ղեկավար Աբրահամ Արտաշեսյանը:

## Երևանի մամուլի ակումբի և Համայնքների ֆինանսիստների միավորման հատուկ մրցանակ



**«ԼՈՌԻ» հեռուստաընկերության «Պահանջատեր համայնք՝ հաշվետու իշխանություն» հաղորդաշար**՝ մարզային խնդիրները խորությամբ և ակտիվորեն լուսաբանելու համար: Մրցանակը հանձնեց ԵՄԱ խորհրդի անդամ Հերիքնազ Հարությունյանը:

## Երևանի մամուլի ակումբի և Համայնքների ֆինանսիստների միավորման հատուկ մրցանակ



**Նելլի ՄԻՐՉԱԽԱՆՅԱՆ**, «Զանգեզուր» հեռուստաընկերության լրագրող՝ մարզային անցուդարձի օպերատիվ և հետևողական լուսաբանման համար: Մրցանակը հանձնեց ԱՄՆ ՄԶԳ կառավարման ոլորտի փորձագետ Բելլա Մարգարյանը: